



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Սօֆիա Սուլիսանօվնա եւ Դաւիթ Գալիլիօվիչ Տէր-Ստեփանօվներ յայտնում են աղջկաններին եւ ծանօթներին, որ այս յունիսի 16-ին վախճանվեց առաջին եղբայրը, իսկ երկրորդի եղբոր որդին, երգուեալ հաւատարմատար:

ԳԱՐԻԷԼ ՍՈՒԼԻՍԱՆՈՎ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՈՎ

Յուդարկաւորութիւնը տեղի կունենայ իր բնակարանին, որ գտնվում է Պասկեվիչի փողոցի վրա, № 14 (նախկին Սարգո-Խաթաթուտակայա) գէպի Մոդնո օ. Գեորգ եկեղեցին, իսկ այստեղից դէպի Խօջիվանքի գերեզմանատունը: Ամբիճքը լինելու է յունիսի 18-ին եւ 19-ին, երեկոյան 7 ժամին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրեդիտի ընդարձակման նոր միջոցներ.— Ներթիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Լաւ է ուշ քան երբէք. Նամակ Լոռու դաւառից. Նամակ Տաղաւթից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՆԱՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՐԵԴԻՏԻ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ՆՈՐ ՄԻՋՈՑՆԵՐ

Մեր գաւառական քաղաքները եւ մեծ աւանները, ունենալով տներ, այգիներ եւ գանաղան տեսակ կալուածքներ, անկարող են օգտվել կրեդիտից, ինչպէս այդ անուամբ են այն մեծ նահանգական քաղաքները, որտեղ բացված են քաղաքային կրեդիտային ընկերութիւններ, օրինակ Քիֆլիսը եւ Բաղուն: Պետական խորհուրդը, ցանկանալով օգնել եւ այդ կարգի սեփականատէրերին, որոնց թողատուրդը գոյութիւն ունեցող ընկերութիւններին դրաւ վերջնելու եւ հարեան քաղաքների ու նոյն իսկ մեծ աւանների կալուածները: Այդ պիտով Քիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութիւնը կարող է լինի դրա վերջնելու, օրինակ, Գորի, Ախալցխա, Ախալքալաք, Սղիսի, Քելաք քաղաքների եւ նոյն իսկ Ջալալ-Օղլու ու Շուշիների նման աւանների կալուածքները: Բազուն էլ նոյն կարգով Շամախու, Դուբայի, Գերբեքի, Լեւզորանի եւ այլն կալուածքները:

Այդ իրաւունքը ստանալու համար պէտք է գոյութիւն ունեցող ընկերութիւնները, ընդհանուր ժողովի որոշմամբ, դիմեն Ֆինանսների մինիստրութեան, ինչպէս այդ արտօնութիւնը: Պահանջվում է, որ ժողովի որոշումը կայացած լինի ձայների երկու երրորդականի մեծամասնութեամբ: Եւ այն քաղաքը, որ մոյցնվում է ընկերութեան գործողութիւնների շրջանի մէջ, ունենայ կալուածքներ, որոնց ապահովագրական արժէքը լինի ոչ պակաս, քան 150,000 ռուբլի:

Ներկայ կարգադրութիւնը լայնացնելով կրեդիտի շրջանը մեր երկրում եւ մեծ գիւղերի ընկերներ առաջ բերելով գաւառական քաղաքների համար, կը նպաստի իր կողմից թեթեւացնելու տեղական տոկոսների ծանրութիւնը: Գաւառական քաղաքները իրանց փողերի միջոցներով կարողութիւն կը ստանան համարձակել եւ մեծ կրեդիտային հիմնարկութիւններ հաստատել, որոնց մի լաւ աստիճանն այն է, որ նրանք կրում են իրանց մէջ փոխադարձ օգնութեան սկզբունքը եւ այդ ընդհանուրի ձեռնուռ նպատակներ:

Պետական խորհրդի կարծիքը մայիսի 1-ին ստացաւ Բարձրագոյն հաստատութիւն եւ պէտք է սկսի իրագործվել պետութեան բոլոր մասերում: Ցանկալի է, որ մեր երկրում գոյութիւն ունեցող քաղաքային կրեդիտային ընկերութիւնները օգտվեն արտօնութիւնից եւ գրաւեն իրանց գործողութիւնների շրջանի մէջ հարեան քաղաքները, օգնելով թէ իրանց ֆինանսական գործերի ընդարձակման եւ թէ նպաստելով էփան կրեդիտի տարածման գաւառական քաղաքներում:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Եթէ կամենում էք տեսնել թէ ինչպէս ողբում է մեր իրականութիւնը, ինչ ցնցողներն մէջ է մեր փաթաթվում եւ ինչպէս է տանջվում մի խղճուկ կենսի պահպանելու համար, դնալէ մեր երկրի այնպիսի անկունները, որոնք ժողոված են Աստուծուց եւ մարդկանցից, Գանձակի նահանգը պարունակում է իր մէջ մի ահագին գաւառ, որ հին Հայաստանի ամենանշանաւոր նահանգներից մէկն էր—Սիւնիքը: Այժմ Սիւնիքը կոչվում է Չանգեզուր: Բայց հարցը, ի հարկէ, անուան փոփոխութեան մէջ չէ: Ցաւեցնող հարցը այն է, որ այդ երկիրը այժմ էլ նոյն դրութեան մէջ է, ինչպէս առաջապահ Սիւնի նահանգների ժամանակ: Դա մի զարմանալի աշխարհ է. այժմ էլ նա ունի տեղեր, ուր մարդիկ արօղորդանքներ ծաւանակող շատ չեն հետաքննել եւ գիտ ապրում են քաղաքներում: Ուղեւորը զարհուրում է, տեսնելով հակադաս լեռների այդ երկրի հաղորդակցութեան միջոցները: Հին, շատ հին ժամանակներից է մարդը այնտեղ քաղաքակրթական կեանք սկսել, բայց զարմանալին այն է, որ դարերի ահագին շարքի տակով անցել եւ մեզ են հասել մի ափի լայնութիւն ունեցող ճանապարհներ, որոնք ողորդում են լանջերով, գահավիժվում են սոսկալի խորխորանների մէջ եւ այնպէս են երեւում, կարծես թէ երէկ, անցեալ օրն են մարդկանց եւ անասունների ոտները կոխկոտել եւ դնալու հետքեր պատրաստել: Մարդը իր այդ ճանապարհների վրա խնդ, հնարաւորութիւններ բոլորովին չէ գործադրել. միակ ճարտարապետները, միակ հողաշինները ոտներն են եղել, մարդկանց եւ անասունների ոտները: Ինչպէս ջրհեղեղան ժամանակներում, այնպէս էլ այժմ ձին է, որ արագ շարժողութեան ամենաարագը աստիճանն է ներկայացնում, բայց ձին էլ այդ լեռնաստանում միայն յուսահատ կերպով շարժում է գլուխը, երբ սկսում է մագլցել սեպալայն բարձրութիւնները: Սակայն նկատի ունեցէ՛ք մեր ներկայ ժամանակը, մի ժողովք, որ առանց ճանապարհների չը կայ եւ չէ կարող լինի բարեկեցիկ մարդկութիւն—եւ դուք կը հասկանաք թէ նահապետական Չանգեզուրի դժբաղդութիւնը ինչ չափերի է հասնում:

Չանգեզուրի գիւղերը—գրում է «Тифл. Известия» լրագրի թղթակիցը—տեղաւորվում են կամ անընդախոր ձորերի մէջ կամ գլուխ պտտեցնող բարձրութեան լեռների ծայրերին, դէպի ուր պիտի բարձրանալ—բառի բուն նշանակութեամբ—չորեքթաթ տալով: Չանգեզուրի գիւղացին չէ կարող մի ափ հող անգամ մշակել, առանց մեծ ջանքեր գործ դնելու. որպէս զի աշխատանքը յարմարեցնվի տեղի պայմաններին: Տեսէ՛ք թէ ինչպէս են այստեղ վարում, ինչպէս են հաւաքում հողն՝ դաշտերից, եւ դուք կը հասկանաք թէ որքան ծանր, ոյժերից վեր աշխատանք են գործ դնում գիւղացիները, վարելով եւ հնձելով սարերի լանջերի եւ գաւթաթների վրա: Այստեղ ամեն մի աղօս, ամեն մի հասկ ոտոգված է արիւն քրտնեքով:

Սակայն այդ տեսակ աշխատանքն էլ չէ ապահովում գիւղացու գոյութիւնը իր հողի վրա. Չանգեզուրցին սովամահ կը դառնար, եթէ միջախութիւն չանէր ուրիշ տեղերում, զիստաւրապէս Բաղուն: Թղթակիցը վկայում է, որ մի քանի գիւղերի աղքատութիւնը ուղղակի անհնարին է նկարագրել: Հսկայական աշխա-

տանք եւ ամենաշին վարձատրութիւն,—հաս թէ ինչ տեսակ լուծ է ճնշում զանգեզուրցի գիւղացուն: Սարաւիկի կերպով զարգացած վաշխառութիւնը այդ ողորմելի, կրտաքաղցած գրութեան հետեւանքն է: Եւ սակայն բնութիւնը միանգամայն անխիղճ չէ եղել այդ լեռնաստանի ժողովրդի վերաբերմամբ: Նա դրել է լեռների մէջ հանքային հարստութիւններ, որոնցից այժմ մշակվում է միայն պղինձը, այն էլ սահմանափակ չափերով: Շատ հարստութիւններ մնում են անշարժ կամ անմատչելի. ճանապարհների բացակայութիւնը խեղդում է ամեն մի ձեռնարկութիւն, անտեսական առաջնութեան ամեն մի միտք: Չանգեզուրցին իր վարենի կամենքների զոհն է. գաւառի տափարակ մասում է ծանր գնով առած հացը մինչեւ յենապին մասը տանելը կրկնապատիկ գին է ստանում, որովհետեւ փոխադրելը շատ դժուար է եւ շատ թանկ է նստում: Անհնարին երկիրն է Չանգեզուրը. այնտեղ ծանրոց փոխադրողը գրաստի եւ նրա փնակակից մարդու մէջքն է: Թղթակիցը ցանկալի է համարում, որ լաւ ճանապարհներ չլինեն Շուշուց մինչեւ Գորիս, որ գաւառի կենտրոնն է (եղած ճանապարհը սաստիկ անյարմար է եւ փչացած) եւ Գորիսից մինչեւ պղինձի հանքերը եւ Նախիջևանն: Եւ իբրեւ, զանգեզուրցուն շունչ եւ հոգի տալ կարելի է միայն բարեկարգ ճանապարհներով: Այդ լեռնցուն պէտք է չարժվելու, չփվելու, աննկելու եւ ստանալու հնարաւորութիւն տալ, եւ նա, հաւատացած ենք, կը կենդանանայ, կապիւն այնպէս, ինչպէս վաշխ է մի զարմանալի փրկ, չարքաշ ու տոկուն աշխատաւորին...

ԼԱՒ Ե ՈՒՇ ՔԱՆ ԵՐԲԵՔ

(Նամակ Ալեքանդրօպօլից)

Վեհափառ Կաթողիկոսը, վերջապէս, թեմական դարձրեցիկ հարցը լուծեց ցանկալի կերպով:

Ով հետաքրքրվել է վերջին 5—6 տարվայ ընթացքում մեր հոգեւոր վարչութեան մէջ տեղի ունեցած գործողութիւններով, նրա համար պարզ է, որ այս շրջանում ամեն միջոց գործ է դրված եղել որոշ մարդկանց պաշտօններ տալու, յայտնի մարդկանց զեկավարութեան յանձնելու հոգեւոր վարչական գործերը թէ էլ միաժամանակ եւ թէ նրանցից դուրս—թեմներում:

Թաղորդութիւններն ու թեմերը շատ անգամ թափուր էին մնում, որովհետեւ «իրանց» մարդկանցից այս կամ այն անձնաւորութիւնները որ եւ է պատճառով չէին կարող պարտապէս մնալու պատճառներով ստանձնել, իսկ հակառակ կուսակցութեան մարդիկ բարձր իշխանութեան առաջ ներկայացված էին որպէս թշնամի եկեղեցու աւանդական կարգերին, թշնամի էլ միաժամանակ չահերին եւ ապիկար պաշտօններ վարելու: Թեմական դարձրեցիկ մասունքներն այնպիսի անհաշիւ զանազանութիւններ, որոնք, իբրեւ պնակակիցներ, կազմել էին մանր խմբակներ գաւառներում եւ էլ միաժամանակ նստածների կամ սրանց արեւմտական պաշտօնական յետին դռներով արած թեկադրութեամբ աշխատում էին սեւեռնել իրանց ոչ կուսակից մարդկանց եւ տեղը իրանք բռնել:

Այդ կուսակցութեան մարդիկ, առաջնորդվելով նեղ անձնական հաշիւներով եւ չունենալով որոշ հաստատուն ծրագիր եւ ուղղութիւն, իբրեւ անընդունակ կառավարիչներ ուր ոտք դրին, քանդեցին, խախտեցին եղած կարգերը եւ որպէս զի իրանց առաջից վերացած լինի ամեն խուժ ու խոշ բռնաբարեցիկ ժողովրդական իրաւունքները եւ հասարակական գործերից փախչելի իրան, հասարակութեանը: Բայց տեղը ոչինչ չը դնելով ստեղծեցին մի քառս եւ վիճակներն ու դարձրեցին դարձրի մայականութեան ասպարէզ:

Վեհափառ Կաթողիկոսը, հէնց սկզբից շրջադարձով միջնորդեց մարդկանցով եւ հաւատարմով դրանց ամեն մի խօսքին, անում էր

կարգադրութիւններ յօգուտ այդ կուսակցութեան, մինչդեռ միւս խմբի մարդիկ չուզելով ստորաքաղաք, մաքրապաշտ միջոցներով առաջնորդվել հեռու քաղաքներ ասպարէզից, սպասելով այս բոլորի վախճանին: Երբեմն միայն, երբ առիթ էր ներկայանում, սրանցից մինը կամ միւրը տիրապետող բեմի վրայ նպատակներն էր պարզում Վեհափառ Կաթողիկոսի առաջ եւ ցոյց տալիս, թէ այդ, իրանց եկեղեցու հարազատ զաւակ կոչուողների ընթացքը ուր է տանում եւ ինչ չարիքների դուռ բաց անում:

Բարեբաղդաբար, «հարազատ զաւակները» այսքան տարիների ընթացքում ոչ մի տեղ չարգարացրին իրանց վրա դրած յոյսը, այլ, ինչպէս ասացինք, ուր ոտք դրին, կոխ, խռովութիւն, անկարգութիւն առաջացրին. եւ որովհետեւ Վեհափառ Կաթողիկոսը ամեն տեղ չըջապայելով, հետեւելով հասարակական կարծիքին, անձամբ ծանօթանում էր գործերի հետ, չէր կարող այսքան տարվայ ընթացքում չը համոզվել, որ այդ խմբակը «Հայաստանեայց եկեղեցու հարազատ զաւակ» անուամբ առաջահագործում է կաթողիկոսական վստահութիւնը յօգուտ իր անձնական շահի:

Մենք հաւատացած ենք, որ վերջին կարգադրութիւնը երկար գիտողութիւնների արդիւնք է, ուստի յոյս ունենք, որ դրան կը յաջորդեն դարձեւոր մի քանի անհրաժեշտ բարեփոխութիւններ:

Լաւ է ուշ քան երբէք:

X.

ՆԱՄԱԿ ԼՈՌՈՒ ԳԱՒԱՌԻՑ

Յունիսի 2-ին

Լոռու բոլոր գիւղական հասարակութիւնների մէջ զարթեցրած է մի վերին աստիճանի կարեւոր նշանակութիւն ունեցող հարց. դա տանուածքների ոտնիկ նշանակելու հարցն է:

Յայտնի է, որ գիւղական համայնքներն ընդարձակ իրաւունքներ ունեն իրանց գործերը կարգադրելու. այսպէս, հարկանաւորութիւնը ամբողջովին համայնքի տրամադրութիւնից է կախված, եւ նա կարող է գիւղական հարկը ժողովել, հիմք ընտրելով գիւղացու կարողութիւնը: Նրա հոգի, ստաւոր քանակութիւնը եւ այլն: Հողաւորութիւնը, որ ամեն գիւղում օրվայ հարց է դարձած՝ կախված է ամբողջապէս համայնքի բարեկեցիկացողութիւնից: Պաշտօնականների ընտրութիւնը նոյնպէս համայնքի անընդաւարտ իրաւունքն է:

Բայց թէ ինչպէս է համայնքը վարում իր գործերը,—դրա համար պէտք է մտնել գիւղը եւ տեսնել, թէ արդեօք հասարակութիւնը օգտվում է իր իրաւունքից: Նա օգտվում է իր իրաւունքից շատ քիչ, ոչ այն չափով, ինչ չափով պէտք է օգտվել: Նրա գործերը վարում են տանուտէրը, քեօխլէն եւ դրագիրը. դրանց հետ կը միանան մի երկու՝ լոկ անուանով պատուաւոր, իսկ գործով անպատիւ մարդիկ, եւ անա ամբողջ հասարակութիւնը գնում է՝ ուր նրան առաջնորդում են: Բայց ինչ են ներկայացնում այս առաջնորդները եւ ուր են առաջնորդում: Սրանց գլխաւորը—տանուտէրը, մեծ մասամբ անընդունակ, առանց որ եւ է ծրագրի, մի բարոյական զատարկութիւն եւ երբեմն էլ անբարոյական հրէշ, մարակը ձեռքին գիւղն ընկած՝ ծեծում է ու ծեծում, ինքն էլ չը գիտէ ինչու. չէ որ առաջին տանուտէրն էլ այդ տեսակ էր, պէտք է խիստ լինել: Այսպիսով նա գիւղի բարեկաւորութեան մասին մոտածելու փոխարէն դառնում է նրա գլխին կատարեալ պատիժ:

Ժիշդ է, գիւղամիջոց մշտապէս կայ հակառակ կուսակցութիւն, որ իրաւացի բողոքում է անարդարութեան դէմ. բայց այդ բողոքները հօ գործադրելու համար չեն. պէտք է խօսել գիւղամիջոցում, պէտք է ասել ինչ որ ձեռնարկում է, բայց թէ ով է կատարողը: Բողոքողն էլ չը գիտէ: Այս է իրականութիւնը: Տանուտէրի ընտրութեան ժամանակ միայն անձնաւորու-

Թերմաներն են փոխվում, իսկ տիպը մի և նորին է մնում։ Բարեկիրքը մարդն էլ, առնու- տէր դառնալով՝ հետզհետե սովորում է «արա- սին» գրգռման դնել, կորցնում է ամենայն ան- աշխուժութիւն եւ խիղճ, փչանում է եւ բոլոր- վին կերպարանափոխվում։ Եւ այս միշտ կը կրկնվի, քանի որ մեր տանուտէրերը ոտնիկ չունեն։ Մենք պահանջում ենք, որ նրանք հա- սարակութեանը ծառայեն, թողնեն իրանց չա- հերը, բայց մենք պէտք է առաջ վարձատրենք, յետոյ պահանջենք։ Նա չէ կարող իր երեխա- ներին սովի մատնել եւ ձրի մեզ ծառայել։ Ձրի ծառայութեան մէջ, անշուշտ, պէտք է ասպա- րէզ գայ կաշառակերութիւնը, եւ նա գոյու- թիւն ունի։ Դրա դէմ կուեկու միակ միջոցը ոտնիկ նշանակելն է, որովհետեւ միայն այդ դէպքում կարելի է յուսալ, որ բարեկիրքը մար- դիկ ասպարէզ կը գտնէ գործելու նպատակով, եւ մենք իրաւունք կունենանք սպասելու եւ պահանջելու անաշխտ գործունէութիւն։

Այս կարեւոր հարցն է գրված Լոտու բոլոր հասարակութիւնների առաջ, եւ թող գիւղա- ցիները լաւ հասկանան, որ ոտնիկը պէտք է նը- չինութեան ոչ թէ ներքին տանուտէրին, այլ առհասարակ տանուտէրի պաշտօնի համար։ Նրանք շատ են արտնչում, ասում են, որ աղքատ ենք, փող չունենք, բայց իսկա- պէս մի աւելի մեծ պատճառ ունեն։ այժ- մեան կազմին ի նկատի ունենալով՝ ասում են, որ ինչ ոտնիկ էլ տանք՝ մի և նոյն է, տանու- տէրն առանց կաշառքի չէ կարող ապրել։ Բայց չէ որ տիպերը փոխելու մասին պէտք է մտա- ծել, իսկ տիպերը փոխելու համար անպայման պէտք է ոտնիկ նշանակել, որ նորերն էլ ներքի ճանապարհով չը գնան։ Եւ վերջապէս փորձը ցոյց է տալիս, որ տանուտէրին մի քանի հա- րիւր բուրդի ոտնիկ նշանակելով՝ նոյն տանու- տէրի միջոցով հասարակութիւնը հազարներ է չափում։ Դրան օրինակ կարող է ծառայել հա- րեւան Շուպաւէրի հասարակութեան չորհա- կալութեան արժանի տանուտէր պ. Մեհրա- բեանը։ Օրինակը վարակիչ է եւ ցանկալի է, որ միւս հասարակութիւններն ու տանուտէր- ներն էլ հետեւեն այդ օրինակին։

Վ.

ՆԱՄԱԿ ՏԱԳԱՆՐՈԳԻՑ

Մայիսի 31-ին

Մայիսի 21-ը ուրախալից օր եղաւ Տագան- րօզի հայ դաշութի համար։ Այդ օրը Նոր-Նա- խիջեանի փոխանորդ Մուշէ վարդապետի եւ շատ քահանաների ձեռքով օրհնվեց եւ օծվեց ապագայ հայ եկեղեցու հիմքը, յանուն ա. Յա- կօբի։

Տագանրօզում հայ եկեղեցի հիմնելու միտքը նոր չէ։ Դեռ արանից 20—30 տարի առաջ մտադրութիւն է եղել եկեղեցի շինելու գործին ձեռնամուխ լինելու, բայց միջոցների սղու- թեան եւ եռանդի պակասութեան չնորհիւ գործը դուրս չէկաւ։ Վերջապէս արանից չորս տարի առաջ տեղիս հայ վաճառականներից Ն. Օդարաշեան, Ա. Խաչերիկեան եւ Երկանեան նո- րից լոյս աշխարհ հանեցին այդ հարցը եւ ժո- ղովորի կողմից (որի թիւը 300—400 կը լինի) ընտրվելով հողաբարձուներ՝ ձեռնարկեցին դը- րամ հաւաքելու Տագանրօզի, Բոստօլի եւ Նոր-Նախիջեանի հայերի մէջ։ Չորրորդ հո- ղաբարձու էլ ընտրվեց մի ոմն Խ. Մարտիրո- սեան, կովկասեցի հայերի կողմից։ Հաւաքված գումարը հասաւ ութը հազար բուրդու. մի և նոյն ժամանակ էլ խնայարգոյն խնդիր տրվեց Թագաւոր Կայսրին՝ իրաւունք ստանալու հա- մար Տագանրօզում հայ եկեղեցի շինելու Նոցա Կայսերական Մեծութիւններէ ա. Թագադրու- թեան յիշատակին։ Տեղիս միլիոնատէր Յ. Սե- րերբեակեան իր կողմից ընծայեց մի գեղեցիկ եւ ընդարձակ տեղ, Գրեշնակայ փողոցի վրա (գէպի ծովի իջնոց «Каменная лѣстница» կոչ- ված անդուղքի ձախ կողմում), որտեղից մի չքեղ տեսարան է բացվում Ագովի ծովի վրա՝ Եկեղեցու շինութեան իրաւունքը Բարձրագոյն հաստատվեց 1899 թվի օգոստոսի 12-ին, եւ տեղիս գաղութը որոշեց ձեռնամուխ լինել գոր- ձին, գումարելով ժողով էլ ընտրելով եկեղե- ցու շինութեան համար մի յանձնաժողով, բաղ- կացած 12 անձերից։ Այս ատրի գաղութն սկը- վելուն պէս՝ ձեռնարկեցին փորելու եկեղեցու հիմքը եւ մայիսի 12-ին, ինչպէս վերեւ յիշե- ցինք՝ օրհնվեց եւ օծվեց։

Հանդէսին բաւականաչափ բազմութիւն կար թէ հայերից եւ թէ ուսանողներից. ներկայ էին ի միջի այլոց ոտնիկապաշտ պ. Վարդապետի եւ նոստար իմպլանկու, որը քիչ չէ աշխատել եկե- ղեցու հիմնարկութեան գործն առաջ տանելու

համար ժողովուրդը շատ ուրախ էր, որ եկե- ղեցի պիտի ունենայ եւ ժամերգութիւն պիտի լաւ մայրերի լեզուով։ Հանդէսը վերջացաւ հ. Մուշէի մի կարճ քարոզով, որից յետոյ տեղի ունեցաւ ճաշկերոյթ։ Ծաշկերոյթի միջոցին Մուշէ վարդապետի առաջարկութեամբ հայերը լուրջօրէ պաշտի փող հաւաքեցին։ Զէյթունի սովատանջ հայերի օգախն։ Ցանկալի էր, որ ուրիշ տեղերի հայերն էլ հետեւէին այս բարի օրինակին։

Բաւական վիճարանութիւնների առաջարկ- դարձաւ եկեղեցու յատակապիւր, որը ձրեպաշտ կազմելու ու գծել է Նոր-Նախիջեանի քաղա- քային ճարտարապետ պ. Դուրբախեան հայկա- կան ոճով։ Պ. Մ. Սերբերեակեան, որը, ի դէպ ասեմ, ոչ միայն գաղափար չունի հայկական ճարտարապետութեան մասին, այլ հայերէն իսկ խօսել չը գիտէ, առաջարկում էր անպատճառ փոխել եկեղեցու կոնստիւկտիւնը եւ մի քա- նի ուրիշ տեղերը, առարկելով թէ հայկական ոճը տգեղ է (!)։ Ոչ ոք ձայն չը հանեց, յու- սալով, որ եթէ համաձայնութիւն տրվի՝ պա- րոն իր հազարները պիտի թափէ եկեղեցու շինութեան համար, որն իսկապէս անպատճառ է։ Բայց նրա յանկուժութիւնը չիրագործվեց, ո- րովհետեւ այդ խնդրի առիթով Նովոշեքիակ ուղարկված ճարտարապետ Բոժնով յետ դար- ձաւ, մերժումն ստանալով պ. Առամանից եկե- ղեցու ձեւը փոխելու։ Եկեղեցին պէտք է կա- ուցվի այնպէս՝ ինչպէս Բարձրագոյն հաս- տատված է։

Տեղիս հայ գաղութը, ինչպէս ասում են, մտադիր է ապագայ քահանային ոտնիկով պա- ճել, հետեւելով Բաթումի օրինակին։ Եկեղեցու շինութիւնը կարծեօք կաւարտվի 2—3 տա- րի մէջ։ Ընծայված է բաւական նիւթեղէն, իսկ գրամի հանգանակութիւնը պիտի շարու- Ո. Անտիկան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ առաւօտ Թիֆլիսում վախճանվեց յայտ- նի փաստարան երգուեալ հաւատարմատար Գարրիէլ Տէր-Ստեփանեան։ Հանգուցեալը մեր երկրի տաղանդաւոր եւ առաջնակարգ փաստարաններից մէկն էր։ Օժտված լինելով ճառախօսութեան ընդունակութեամբ, առողջ դատողութեամբ եւ գործնիկ էութեան արագ ըմբռնողութեամբ, Տէր-Ստեփանեան շատ շուտ գրաւեց պատուաւոր դերը մեր կովկասի ի- րաւաբանների շրջանում։ Մահը նրան խլեց դեռ համեմատաբար երիտասարդ հասակում, արդ նա գտնվում էր իր ոյժերի զարգացման ճիւղաճաճող շրջանում։ Նա մեռաւ 49 տարե- կան հասակում, պէ՛տք է հիշատակել։ Հանգուցեալ Տէր-Ստեփանեան ծնվել է 1851 թվին։ Աւարտելով իր ուսման ընթացքը Թիֆ- լիսի 1-ին կրթական գիմնազիայում 1871 թվին, նա մտաւ Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետը, որ եւ աւար- տելով իր ուսման ընթացքը 1875 թվին Բարձ- րագոյն ուսումնական աստիճանից յետոյ, հանգու- ցեալը մտաւ պետական ծառայութիւն, այն է կովկասեան զինուորական նահանգական դատա- րանը որպէս դատաստանական պաշտօնների կանգիդատ։ Շուտով նա ստացաւ զինուորական պոլիտրօրի օգնականի պաշտօն։ Նա պետական ծառայութիւնը թողեց 1889 թվին եւ այդ թը- լից արդէն մտաւ մեր քաղաքի երգուեալ հա- վատարմատարների շարքը։

Երկրագործութեան միջնատրի օգնական Ստեփան Երէկ, յունիսի 16-ին, այցելեց Կով- կասեան կառավարչապետի օգնական Ա. Յրէ- ղէին։ Մասնագիտական հիմնարկութիւններից Ստեփան այցելեց չեքոսլովակական կայսրաւր, Թիֆլիսի այգեգործական դպրոցը եւ բոսանի- կական այգիին։ Այսօր, չաբաթ, յունիսի 17-ին, Ստեփան ուղևորվում է Կարպաթ, ծանօթ- նալու փորձական ագարակի գործունէութեան հետ։ Երեկոյան նա կը վերադառնայ Թիֆլիս։

Մեզ հաղորդում են, որ չուչեցի մի երիտա- սարդ, Միքայէլեան, որ մի քանի տարիներից մի վեր սովորում է քանդակագործութիւն, պատրաստել է Ներսէս հինգերորդ կաթողիկո- սի արձանը եւ ներկայացրել Ներսիսեան դըպ- րոցի վարչութեան՝ դպրոցի եթմաւանութեանը ամսական առիթով։ Արձանը շինելու համար քանդակագործը օգտվել է Ներսէսի պատկեր- ներից։ Ներսէսը ներկայացված է նստած բազ- կաթնով։ Վրա Արձանը շինված է ամուր քարից եւ իբրեւ աշխատութիւն թողնում է բաւա- րար տպաւորութիւն։ Պ. Միքայէլեան մտադիր

է ուղևորվել Իտալիա իր արհեստի մէջ կա- տարեկագործվելու համար։

Երկրագործութեան միջնատրութիւնը մտա- դիր է բանալ Պետերբուրգում մի գիւղատնտե- սական բարձրագոյն դպրոց, որի ծրագիրը պէտք է նման լինի այն ծրագրին, որով այժմ ղեկավարվում է Մոսկվայի մօտ, Պետրովսկոյ- Բաղումովսկոյ տեղում գտնվող գիւղատնտե- սական ինստիտուտը։

Ստացանք բժիշկ Ա. Բուդուղեանի հանրա- մատելիք-գիտնական գրադարանի մի նոր հրա- տարակութիւնը, «Աշակերտի առողջպահու- թիւն» անունով։ Դա մի փոքրիկ աշխատու- թիւն է, որը թարգմանել է հայերէնի տիկին Մարիամ Բժիշկ Բուդուղեան գրել է իր կող- մից մի նախաբան։ Գրքոյը բաղկացած է փոքրագիր 18 երեսից եւ արժէ 2 կօպէկ։

Յայտնի է, թէ որքան կարեւորութիւն ունի տարվայ բերքի մասին ճիշդ տեղեկութիւններ ունենալը։ Աճի առաջ ունենալով այդ տեղե- կութիւնները ժողովուրդը ներկայ անբաւարար վիճակը, մի յատուկ յանձնաժողով, որին մաս- նակցում են ներքին գործերի, Ֆինանսների եւ երկրագործութեան միջնատրութիւնների ներկայացուցիչները, իշխան Օրբինսկու նա- խագահութեամբ, մշակում է նոր ծրագիր թէ հունձը եւ թէ ցանքերի տարածութիւնը ճիշդ արձանագրելու համար։

Ա.ԽԱՎԱՐԱՆՔԻ գաւառից, յունիսի 7-ից, մեզ գրում են. «Ահա ամսից աւելի է, որ անձ- րեւներ են գալիս եւ եղանակը չտւում է։ Տաք արեւի պալատութեան պատճառով՝ հաղահա- տիկի յանքերը դանդաղ են դարգանում։ Խո- տի բերքը շատ առատ է եւ սպասվում է անա- սունների կերակրել մեծ պաշար։ Հիւսիսային Կովկասի ցորենն առաջ է գնացել աջող կեր- պով։ Թէեւ նա նօսը է ցանված, դեռեւտիկի վրա 7½—8 պուգ, բայց ճիւղաւորվել է եւ այն- քան խտացել, որ հաւասարվել է տեղական ցորենի այն ցանքերին, որտեղ մի դեռեւտիկի վրա ցանվել է 10 պուգ տեղական ցորեն»։

ԳՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Մայիսի 14-ին Բագուից եկաւ աղբօսմ Ս. Բաշինջաղեան։ Մայիսի 21-ին քաղաքային այգում ժողով էր նշանակել, ուր հրաւիրել էր քաղաքիս շատ այգեպաններին։ Պ. Բաշինջաղեան բացատրեց ժողովականներին, որ քան երեք փորձեր է կատարել այգիներում եւ գտել է զանազան հիւանդութիւններ ու ցոյց տուել թէ ինչպէս պէտք է բժշկել նրանց։ Քանի որ այստեղ յա- ճախ անձրեւներ տեղացին, պ. Բաշինջաղեան ենթադրում է, որ գուցէ պատահի, որ հիւան- դութիւններ երեւան նաեւ խաղողի վրա եւ խրատների տուեց թէ ինչպէս պէտք է բժշկել այդ հիւանդութիւնները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

«Köln. Zeitung» լրագիրը, որը լաւ տեղեկ է գերմանական կառավարութեան հայեացքնե- րին չինական հարցում, յայտնում է, թէ նուա- ճողական նպատակները, որոնք վերադրվում են զանազան պետութիւններին, հազիւ թէ գոյութիւն ունեն իսկապէս։ «Եթէ Ռուսաս- տանը,—ասում է «Köln. Zeitung» լրագիրը,— իսկապէս կամենայ օգուտ քաղել այժմեան անց- քերից՝ Չինաստանի վրա նոր եռանդուն ար- չաւանդ գործելու եւ Պեկինում հաստատու- լու համար, նա ուրիշ վայրերն իրենց, ո- րովհետեւ այժմ մնացած պետութիւնները, մա- նաւանդ Նապօնիան, նրա այգիսի մի քայլին կը պատասխանէին նման քայլերով, մի եւ նոյն ժամանակ Նապօնիային կը պաշտպանէր։ Անգ- լիան։ «Մեծ բուռնցի» ասպտաբլթեան ճշշումից կարող է ծագել ընդհանուր եւրօ- պական պատերազմ, մի բան, որ, ի հարկէ, չէ ցանկանում Ռուսաստանը. ինչպէս այդ ապա- ղուցումն է առաջ կառավարութեան ոչ միայն խաղաղաբնի բաղադրանքները, որ մասնաւոր նրա բռնած դիրքը հարաւ-աֆ- րիկական պատերազմի ժամանակ, այլ եւ նրա վերջին հանգստացնող յայտարարու- թիւնները։ Ինչ վերաբերում է Նապօնիային, ինչպէս մենք կարծում ենք, նա իրան բաւա- կան ուժով չէ զգում, որպէս զի իրային ա- ռանձին քաղաքականութեան հետեւէ, որը կա- րող էր հասցնել նրան Ռուսաստանի հետ ընդ-

հարման։ Իսկ Անգլիան ներկայումս այնքան ծանրաբեռնված է ուրիշ հոգսերով, որ չէ կա- րող իր ձեռքն առնել նախաձեռնութիւն չինա- կան հարցում եւ ամենալաւ դէպքում կարող է միայն պաշտպանողական դիրք բռնել, եթէ նրա շահերն զիպչեն։ Ֆրանսիան նոյնպէս Ձի- նաստանի հարաւում, ուր «Մեծ բուռնցի» չարժուրդ սպառնալի չափեր է ընդունում, գործ շատ ունի, այնպէս որ այդ պետութիւնը եւս հազիւ թէ պաշտպանէ Երկնային կայս- րութիւնը բաժան բաժան անելու ձգտումնե- րը։ Ինչ վերաբերում է Երեքպետեան դաշ- նակցութեան, նրանց խաղաղասէր դիտաւորու- թիւնների մասին աւելորդ է խօսել։ Ի նկատի ունենալով այդ բոլորը, մենք կարծում ենք, որ պետութիւնների ձգտումը՝ պաշտպանել ի- րանց ընդհանուր շահերը Չինաստանում եւ վերականգնել այնտեղ հանգստութիւնը՝ աջո- դութեամբ կը պահվի»։

«Birmingham Post» լրագրի տեղեկութիւն- ների համաձայն, եսպօնական կառավարու- թիւնը ուղեց իմանալ եւրօպական պետու- թիւնների եւ Միացեալ-Նահանգների կարծիքը այն բանի մասին, թէ արդեօք չէ կարելի Տօ- կիոյում կօնֆէրենցիա գումարել։ Չինաստանի ապագայի վերաբերմամբ համաձայնութիւն մը- չակելու համար, Նախ եւ առաջ, ի հարկէ, անհրաժեշտ է պարզել այժմեան պատերազմա- կան դրութիւնը. բայց երբ պատերազմական գործողութիւնները կը վերջանան, այն ժամա- նակ Նապօնիան կը պնդի, այն բանի վրա, որ Պեկինում հիմնվի օտար պետութիւնների հակող կամ խորհրդակցական յանձնաժողով, որի մէջ չա՛հ ունեցող պետութիւններից իւրաքանչիւրը պէտք է ունենայ գոնէ մէկ ներկայացուցիչ։ Ներկայումս բոլոր պետութիւնները համա- ձայն են այն բանում, թէ պէտք է վերջ դնել այրի կայսրուհու իշխանութեանը։ Նոյն բա- նը հաստատում է եւ «Neue Freie Presse» լրագրի Պարիզի թղթակիցը, մի նշանաւոր զիպօմատի խօսքերից. «Պետութիւնների միա- բան գործողութիւնները,—ասեց զիպօմատը,— Չինաստանում իրաւ համար նախ եւ առաջ անհրաժեշտ է հետաքննել այրի կայսրուհուն, որը իր ձեռքն է գցել կառավարչական իշխա- նութիւնը։ Ապա պէտք է նորից վերադարձնել կայսրին իր իրաւունքները, եթէ նա կենդանի է, մի բան, որ հաստատապէս չէ կարելի ա- սել։ Եթէ նա արդէն մեռել է, հարկաւոր է նրա յաջորդ նշանակել։ Ապա պէտք է պաշտօ- նանկ անել այն մանդարիններին, որոնք զբը- դում եւ շահագործում են ժողովուրդը, եւ կայսերական պրինցներին, որոնք միայն գոր- ժիք են կայսրուհու ձեռքում։ Այդ է պետու- թիւնների միաբան գործողութեան նպատակը, որոնց համար ուրիշ ձանադարձ չը կայ։ Եթէ նրանք կամենում են պահպանել չինական կայսրութիւնը։ Ոչ մի պետութիւն չէ ձգտում ոչ պատերազմի, ոչ էլ նուաճումների. նրանք կամենում են միայն կանոնաւոր կառավարչա- կան իշխանութիւն հաստատել Պեկինում։ Պե- տութիւնների համար վճռող չարժանիքը ար- ղիւնաբերական շահերն են։ Չինաստանի բա- ժանումը մեծ վտանգ է ներկայացնում, եւ պետութիւնները դրա մասին չեն մտածում»։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Լայպցիգ, յունիսի 12-ին

Ամսիս 10-ին տեղի ունեցաւ Հայ-գերմանա- կան ընկերութեան 15-ամեայ հիմնադրութեան տարելընդին յետաձգված տօնակարութիւնը։ Նախապէս հրաւիրագրեր էին ուղարկված եւ- րօպայի զանազան հայ-ուսանողութիւններին, սակայն չը նայած որ արձակուրդ էր, դրայի քաղաքների հայ ուսանողները սպասելի թւով ներկայ չէին այս հաղուադէպ ուսանողական տօնին։ Յօրեկանը իրաւ պատշաճ մի առան- ձին հանդիսաւորութիւն չունէր, կրում էր բոլորովին պարզ, ընտանեկան բնաւորութիւն եւ կարելի է ասել յիշեցնում էր ընկերու- թեան սովորական ժողովները իր պաշտօնա- կան եւ գուրաճական մասերով, եթէ նկատի չառնենք փոքրիկ հանդիսասենեակը զարդա- րող մի քանի, ընկերութեան գոյներով, դըր- յակները, ծաղիկները, հանդիսի առիթով եւ- րօպայի զանազան հայ-ուսանողութիւններից եւ ուսանողներից ստացված շնորհաւորական հեռագիրները, նամակները եւ վերջապէս աս- նաձեռքը։

Ժամը 1-ին ընկերութեան նախագահը, որը ջունելով հանդիսականներին, բացված յայտա- րարեց հանդէսը եւ կարգաց վերջիցնայ շնոր-

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.